ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ

Եկե՛ք, սիրուն իմ մանուկներ,
Վազե՛ք, եկեք շուտ ինձ մոտ,
Վիշտ ու կասկած դուրս վանեցեք
Իմ ծեր լանջից հիվանդոտ։

Ձեր սրտերում՝ շող ու թռչուն,
Ձեր մտքերում՝ վրտակներ,
Ինձ տիրում է արդեն աշուն,
Շուտով կրգա և ձրմեռ։

Տաղ կանչեցեք, սիրունիկնե՛րս,
Էն տաղերը խընդագին,
Որ թռչուններն երգում են ձեզ
Գարնան պայծառ օրերին։

Ոչինչ բան է խելքը մարդի,
Եվ դատարկ է, և չընչին
Ձեր մանկական անմեղ շուրթի
Ժըպիտների առաջին։

Ձեզանից լավ՝ երգ չի տեսել
Գարնան օրը ոսկեփայլ,
Դուք եք երգն էլ, խաղն էլ, լույսն էլ,
Ու առանց ձեզ՝ ողջ մըռայլ։